

# Ներգաղթյալների համար օգնություն աղետից հետո

## Ես ներգաղթյալ եմ և բնական աղետից փրկված: Ի՞նչ օգնություն կարող եմ ստանալ FEMA- ից:

Եթե Արտակարգ Իրավիճակների Կառավարման Դաշնային Գործակալությունը (FEMA) աղետից հետո գա ձեր տարածք, Դուք կարող եք օգնություն ստանալ: Ձեր ներգաղթի կարգավիճակը նշանակություն չունի աղետների այս տեսակ օգնության համար.

- Գտնել կորած մարդկանց
- Հրատապ (Emergency) ապաստան, սնունդ և ջուր
- Փոխադրում
- Հրատապ (Emergency) պարագաներ, ինչպիսիք են դեղամիջոց, հագուստ, անձեռոցիկներ և ֆորմուլա
- Ճգնաժամային խորհրդատվություն

**Աղետից հետո Դուք կարող եք զանգահարել 211 իմանալու, թե ինչպես օգնություն ստանալ:**

## Ի՞նչ այլ օգնություն կարող եմ ստանալ աղետից հետո:

**Կա աղետի որոշակի երկարատև օգնություն, որը հասանելի է միայն ԱՄՆ քաղաքացիներին կամ «իրավասու ներգաղթյալներին» (qualified immigrants)**

- Ժամանակավոր վարձակալության բնակարան
- Օգնություն՝ բնակության ծախսերը կատարելիս
- Քանդված տների վերանորոգում և փոխարինում
- Կորած իրերի փոխարինում
- Բժշկական և թաղման ծախսերը
- Փոքր Բիզնեսի Կառավարման վարկեր

**«Իրավասու ներգաղթյալներ», (qualified immigrants) ովքեր կարող են ստանալ այս օգնությունը, հետյալն են՝**

- Օրինական Մշտական Բնակիչներ (մարդիկ ովքեր ունեն կանաչ)
- Փախստականներ, ապաստան հայցողներ կամ մարդկանց, ում «թույլ չեն տվել հեռացնել / տեղահանել»
- Մարդիկ ովքեր ստացել են հատուկ թույլտվություն ԱՄՆ վերադառնալ (paroled) ամենաքիչը մեկ տարով:

- Կուբայի կամ Հաիթիի դիմորդները
- Որոշ Ընտանեկան բնության վերապրածներ
- Թրաֆիքինգից փրկվածներ

## Ի՞նչ անել, եթե ես փաստաթուղթ չունեմ, բայց իմ երեխան ԱՄՆ քաղաքացի է կամ իրավասու ներգաղթյալ?

Եթե ձեր երեխան ապրում է ձեզ հետ և 18 տարեկանից ցածր է, նրանց համար կարող եք դիմել FEMA- ի նպաստների: Ասացեք FEMA- ին, որ դուք ցանկանում եք ծառայություններ միայն ձեր երեխայի համար, և ոչ թե ձեր: Ձեզանից չի պահանջվի տրամադրել ձեր Սոցիալական Ապահովության համարը: Անհրաժեշտ չէ որևէ տեղեկատվություն տրամադրել ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:

## Այս օգնության համար դիմելը կազդի իմ ներգաղթի կարգավիճակի վրա?

Ոչ. Աղետների օգնություն ստանալը ձեզ չի դարձնի անհամապատասխան քաղաքացի կամ օրինական մշտական բնակիչ դառնալու համար (կանաչ քարտ ստանալ):

## Օգտակար խորհուրդներ

- Կարմիր խաչը կարող է աջակցություն ցուցաբերել առանց հարցնելու ձեր ներգաղթի կարգավիճակի մասին: Կարմիր խաչն ունի իր գործընթացը՝ որոշելու՝ ձեր տունը լուրջ վնաս է կրել, թե ոչնչացվել է: Կարող եք զանգահարել Կարմիր խաչ՝ (800) 675-5799 հեռախոսահամարով:
- Պահանջեք թարգմանիչ, եթե անգլերեն չեք խոսում: Թարգմանիչ պետք է տրամադրվի անվճար: Բազմաթիվ գործակալություններ, որոնք օգնում են աղետից փրկվածներին, պարտավոր են թարգմանիչ տրամադրել:
- Երբեք մի տվեք սուտ տեղեկություն: Սա կարող է ձեզ ինդիքներ առաջացնել և կարող է ազդել ԱՄՆ քաղաքացիություն կամ կանաչ քարտ ստանալու հավանականության վրա:

## Իսնդիրներ?

Չանգահարեք 800-870-0732 անվճար  
իրավաբանական օգնության: